

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոկտեմբեր 27ին, Նրեֆշաբքի, հրեկոյեան ժամերգութենէն յետոյ, Ամենապատիւ Պատրիարք Արքայան Հօր՝ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի գահակալութեան երկրորդ տարեդարձի առիթով ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի ուսանողութիւնը, առաջնորդութեամբ իրենց տեսչի՝ Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալմանեանի, բարձրացան Պատրիարքարան:

Պատրիարք Արքայան Հայրը ընդունեց զանոնք՝ Պատրիարքարանի դահլիճին մէջ: Տեսուչ Հայր Սուրբը յանուն վարժարանի ուսանողութեան մաղթեց Պատրիարք Արքայան Հօր՝ արեւշատութիւն, քաջաւորեց եւ քեղմալի տարիներ: Ապա ժառանգաւոր սաներէն մին ծաղկեփունջ մը յանձնեց գահակալ Արքայան Հօր, յանուն ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի ուսանողութեան:

"Կոկիկ" հիւրասիրութենէ մը ետք, Պատրիարք Արքայան հայրական ջերմ յորդորներով խրատեց ժառանգաւորաց Վարժարանի սաները, շեշտելով Նրուսադէմի ժառանգաւորաց Վարժարանի ներկայ դերը՝ սփիւռփայտութեան ծառայութեան մէջ, եւ լայնօրէն խօսեցաւ ուսման կարեւորութեան մասին: Թելադրեց որ ժառանգաւոր ուսանողներ պէտք չէ քաւականման դպրոցի մը վերամուտէ վերամուտ իրենց մատուցուած ուսումով, որովհետեւ կեանքը յարատեւ դաստիարակութիւն է: Քաջայերեց ուսանողները որ ըլլան ուսումնասէն, ընթերցասէր, եւ գիտակից իրենց կոչումին՝ թէ իրենք ժառանգորդներն են եւ պահապան գինուորները Նրուսադէմի փառքը հիւսող Սուրբ Տեղերուն: Արքայան Հայրը ըսաւ. Կեանքի դժուարութիւնները կը հարթուին փորձութիւններու ընդմէջէն, մաքառելով

դժուարութիւններու դէմ, ձգտելով միշտ դէպի լաւագոյնը, ըլլալու համար ուսեալ, օրինակելի հոգեւորական, ի փառս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիի: Հայրական օրհնութենէ ետք, մեկնեցան ժառանգաւոր սաները:

Ամփիջապէս ետք, ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի ուսուցչական կազմը, ինչպէս նաեւ Պատրիարքարանիս դիւանի եւ գոյգ տպարաններու պաշտօնէութիւնը միասնաբար եկան իրենք եւս քաժնելու իրենց քարեմաղբական խնդակցութիւնները Պատրիարք Արքայան Հօր հետ:

Ժառանգաւորաց Վարժարանի ուսուցիչներէն մին, յանուն ուսուցչական կազմին եւ ներկաներուն, մաղթեց Պատրիարք Հօր՝ քաջանիկ, քարգաւան եւ զեղուն գործունէութիւն, ի պանծացումն Սրբոց Յակոբեանց Հայոց Վանքին: Դիւանի պաշտօնեաներուն եւ տպարանի աշխատողներու անունով արտայայտուեցան Կարապետ Յակոբեան եւ Գեորգ Ճինիլիզեան: Պատրիարք Արքայան Հայրը յայտնեց իր շնորհակալութիւնը քարի մաղբանքներուն համար եւ անդրադարձաւ մասնաւորաբար ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի կեանքի գանազան դժուարութիւններուն, գնահատելով հայ ուսուցչի դերը եւ արժէքը հայ ուսանողի կեանքէն ներս, առաջնորդելու համար զայն հայ ուսուցչի ծառայութեան եւ օրինակին ընդմէջէն, դէպի ապագայ ուսեալ, պատրաստուած, եւ նուիրեալ հոգեւորականը: Ներկաներու առաջարկութեամբ նաեւ անդրադարձաւ Հայաստանի ներկայ վիճակի գանազան դժուարին երեւոյթներու մասին:

Հայրական օրհնութենէ ետք մեկնեցան ներկաները աջահամբոյրով:

Երեկոյեան ժամը 7ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը միահաւաք բարձրացան Պատրիարքարան, շնորհաւորելու Ս. Աթոռոյս Գահակալ Պատրիարք Սրբազան Հայրը: Յետ շնորհաւորութեան տեղի ունեցաւ ընթրիք, ջերմ մթնոլորտի մէջ: Ընթրիքի ընթացքին Լուսարարապետ Սրբազանը, Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեանը բաժակ բարձրացնելով Պատրիարք Սրբազան Հօր մաղթեց, երկարակեցութիւն՝ իր տարիներու ընթացքին շահած փորձառութեամբ հովանաւորելու այս Սրբազան հաստատութիւնը իր Առաքելութեան մէջ, գործակցութեամբ Ս. Աթոռիս զինուորեալ միաբանութեան ի փառս Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյն եւ ի պանծացումն Սրբոց Յակոբեանց Հայոց Վանքին: Այս ուրախ բարեմաղթութեան պահուն, բարգման Հայր Սուրբը որ նոր ժամանած

էր օղակայանէն, յայտնեց թէ վանք հասան մայր հայրենիքէն ընտրեալ նոր ժառանգաւոր սաները եւ ուսուցիչները: Այս աւետիսով միաբաններուն ուրախութիւնը կրկնապատկուեցաւ: Ուսանողներուն էջմիածնէն ընկերացող Տ. Յովսէփ Քհնյ. Յակոբեան եւս մասնակցեցաւ ընթրիքին:

Պատրիարք Սրբազան Հայրը մաղթեց որ Միաբանութեան իւրաքանչիւր անդամ իր պաշտօնը խղճմտօրէն կատարելով իր մասնակցութիւնը բերէ եւ իր "ներդրումը" ունենայ Ս. Աթոռոյս վանական կեանքին եւ Ընդհանուր Գործոց կանոնաւորութիւնը ապահովելու համար:

Տէրունական աղօթքի արտասանումով փակուեցաւ այս ուրախ եւ գեղեցիկ երեկոն:

ԱԻԵՏԻՍ ԱՐԴ. ԻՓՐԱՃԵԱՆ